## ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը՝ կանանց տոնի առթիվ

Սիրելի կանայք, թանկագին մայրեր, ջերմորեն շնորհավորում եմ ձեզ գարնանային այս գեղեցիկ տոնի առթիվ:
Համոզված եղեք, որ ձեր անսպառ բարությունը, նվիրվածությունն ու հոգատարությունը աննկատ չեն մնում, և դուք, անառարկելիորեն, արժանի եք շատ ավելի մեծ գնահատանքի՝ մեր պետության համար արժանի քաղաքացիներ կրթելու, նրանց ազգային արժեքների և հայրենասիրության ոգով դաստիարակելու դժվարին, բայց ազգաշահ առաքելությունը համբերությամբ իրագործելու համար:
Այսօր մենք մեծարում ենք մեր կանանց՝ մեր ընտանիքների ջերմության և մեր հասարակության հասունության պահապաններին:
Ձեր անանց հմայքի հետ միասին եղեք առողջ ու երջանիկ: Տոնական տրամադրություն եմ մաղթում բոլորիդ: